**ՀՊՏՀ Ռեկտոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՊՏՀ պաշտոնական կայքի շնորհանդեսին**

**27 դեկտեմբեր, 2011թ.**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի մեծարգո՛ նախագահ, հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ուսանողներ,

Այսօր մեզանից յուրաքանչյուրի համար հիշարժան օր է. բացվում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբողջովին նորացված կայքէջը: Այնտեղ տեղ կգտնեն մեր համալսարանի ուսումնակրթական, գիտական, ուսանողական առօրյային նվիրված բազմաթիվ նորություններ: Այն մեզ համար դառնալու է այցեքարտ աշխարհին ներկայանալու համար: Համալսարանի կայքէջը պարբերաբար կատարելագործվելու է՝ համալրվելով նոր բաժիններով:

Այս գործում դուք էլ, Ձեր առաջարկություններով և ստեղծարար մտքերով, պետք է նպաստեք կայքէջի կատարելագործմանը:

Այս ամենին ցանկանում եմ հավելել, որ համալսարանում նպատակասլաց աշխատանքներ են տարվում համագործակցության պայմանագրեր կնքած պետական մարմինների և կազմակերպությունների հետ համատեղ կրթական և առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների մշակման ուղղությամբ: Դրանից զատ, ստորագրված պայմանագրերով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ֆինանսական ֆակուլտետի մասնաշենքում հիմնովին վերափոխում և կրթական ժամանակակից տեխնոլոգիաների պահանջներին համապատասխան կահավորում է 3 լսարան: «Փյունիկ» հիմնադրամի աջակցությամբ էլ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում նորոգվում և համակարգիչներով կահավորվում է 1 լսարան:

Սիրելի՛ բարեկամներ, բարեփոխումների ընթացքի մասին կարող ենք շատ խոսել: Ցանկանում եմ միայն նշել, որ ակտիվացել են ուսանողների հետ տարվող աշխատանքները, հաճախացել են միջոցառումները, ուսումնական ձեռնարկների շնորհանդեսները,

հանդիպումները մեր մշակույթի, երգարվեստի, գրականության անվանի գործիչների հետ: Այս ամենով հանդերձ՝ մենք բոլորս համոզված պետք է լինենք, որ հաջողության կարող ենք հասնել միայն ու միայն համագործակցությամբ և նպատակասլաց աշխատանքով: Եկեք միասին արձանագրենք մեր համատեղ ձեռքբերումների փաստը և կանգ չառնենք ճանապարհի ամենաթեժ խաչմերուկում: Վստահեցնում եմ, որ «Մենք փոխվում ենք» կարգախոսին հավատարիմ՝ մեր նախաձեռնած փոփոխությունները շարունակական բնույթ են կրելու:

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ գալիք Ամանորի և Սուրբ ծննդի տոների առթիվ:

Շնորհակալություն: